Տարեցների համար նախատեսված ժամանակակից կենտրոնի ստեղծում Երևան քաղաքում

Ծրագրի նկարագիր

Ծրագրի նպատակն է Երևանում ստեղծել տարեցների համար նախատեսված հատուկ կենտրոն, որտեղ բնակվող տարեցները կօգտվեն բարձրակարգ առողջապահական և սոցիալական ծառայություններից, ապահովված կլինի հանգստի և ժամանցի անհրաժեշտ պայմաններով: Համալիրում կգործի նաև տարեցների ցերեկային կենտրոն:

Համալիրի առանձին բնակավայրերն իրենցից կներկայացնեն ժամանակակից բժշկական և սոցիալական հաստատություններ՝ նախատեսված մասնագիտական հատուկ խնամքի ապրելու հնարավորությունից զուրկ մարդկանց համար: Նախագծի իրականացումը թույլ կտա ապահովել ավելի լայն բժշկական և սոցիալական ծառայությունների շրջանակ տարեց և հաշմանդամ քաղաքացիների համար: Համալիրը բաղկացած կլինի մի քանի մասնաշենքից կամ քոթեջներից: Յուրաքանչյուր մասնաշենք կամ քոթեջ մասնագիտացած կլինի համապատասխան հիվանդությունների բուժման գործում (օրինակ՝ վերականգնում կոտրվածքներից և սրտի կաթվածներից, նյարդաբանական հիվանդություններ և այլն):

Համալիրում տարեցները հնարավորություն կունենան նաև մասնակցելու ժամանցային, մշակութային և սպորտային միջոցառումների, մասնակցել տարբեր խմբակների:

Համալիրի կառուցման համար առաջարկվում է 2 լուծում՝

Տարբերակ 1. Շենքային համալիրի կառուցում՝ համապատասխան մասնաշենքերով:

Տարբերակ 2. Քոթեջային համալիրի կառուցում:



Տեխնիկական ցուցանիշներ	Հողամասի մակերեսը կազմում 1,5-2 հա: Տարբերակ 1. Շենքի հարկայնությունը՝ 2-3 հարկ: Մեկ հարկի մակերեսը՝2400 քմ, շենքի ընդհանուր մակերեսը՝ 6000 քառ.մ: Տարբերակ 2. Կառուցապատումը՝ քոթեջային տիպի, ընդհանուր միջանցքով: Հարկայնությունը՝ 2 հարկ: Համալիրի մեկ հարկի ընդհանուր մակերեսը՝ 1100 քմ, շինարարության ընդհանուր մակերեսը՝ 2200 քառ.մ:
Ծրագրի ժամկետները	Շինարարական աշխատանքների իրականացման ժամկետը 3 տարի է:
Ծրագրի արժեքը	Տարբերակ 1. Ընդհանուր արժեքը՝ 5,2 մլն ԱՄՆ դոլար, որից՝ շենքի շինարարության արժեքը՝ 4,8 մլն ԱՄՆ դոլար, բարեկարգման արժեքը՝ 0,4 մլն ԱՄՆ դոլար: Տարբերակ 2. Ընդհանուր արժեքը՝ 2 մլն ԱՄՆ դոլար, որից՝ շենքի շինարարության արժեքը՝ 1,8 մլն ԱՄՆ դոլար, բարեկարգման արժեքը՝ 0,2 մլն ԱՄՆ դոլար:
Ներդրումների ձևը և հիմնական պայմանները	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել մասնավոր ներդրողի ներգրավմամբ: Երևանի քաղաքապետարանը ներդրողին կաջակցի ծրագրի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերման գործում:
Ներկա իրավիճակ	Առկա է հայեցակարգային նախագիծ: